

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիմնուած է

21-22 Յունուար 2017 –ին Պերլինի մէջ տեղի ունեցած
«Իրաւունքներու շուրջ միաւորուած» համագումարի

Եւ

25-26 Փետրուար 2017-ին Փարիզի մէջ կայացած
կլոր սեղանի ընդհանուր սկզբունքներու վրայ:

Jan19
Initiative



«19 Յունուարի նախաձեռնություն» առթիվ

1. Փոքր Ասիոյ ժողովուրդներու «Իրաւունքներու շուրջ միաւորուած» համագումարը, որ տեղի ունեցաւ Պերլինի մէջ, 2017-ի 28-29 Փետրուարին, ստեղծեց «Իրաւունքներու Շուրջ Միաւորուած, 19 Յունուարի նախաձեռնութիւն»ը:
2. Պերլինի համագումարի բոլոր մասնակիցները անդամ են այս նախաձեռնութեան:
3. Այս նախաձեռնութիւնը անկախ շարժում է: Այն որպէս կազմակերպութիւն պիտի չգրանցուի:
4. Շարժման միանալ ցանկացող որեւէ կազմակերպութիւն կամ որեւէ անհատ իրաւունք ունի միանալու անոր:
5. Նախաձեռնութիւնը ստեղծուած է նպատակ ունենալով կազմել «Փոքր Ասիոյ ժողովուրդներու Լիկա»ն կամ «ՓԱԺ Լիկա»ն:
6. Նախաձեռնութիւնը պիտի դադրի գոյութիւն ունենալէ այն պահուն, երբ կը կազմուի «Փոքր Ասիոյ ժողովուրդներու Լիկա»ն
7. Նախաձեռնութիւնը պիտի գործէ 5 յանձնախումբերու միջոցով.
 - ա. Համակարգող յանձնախումբ
 - բ. «Միացեալ Պատմութիւն» յանձնախումբ
 - գ. «Միացեալ իրաւական եւ մարդկային իրաւունքներ» յանձնախումբ
 - դ. «Միացեալ Իրաւունքներ առցանց» յանձնախումբ
 - ե. Փոքր Ասիոյ քաղաքական յանձնախումբ
8. Նախաձեռնութիւնը հիմնադրամ մը պիտի հիմնէ՝ դրամագլուխ ստեղծելու նպատակով:
9. «Իրաւունքներու Շուրջ Միաւորուած, 19 Յունուարի նախաձեռնութիւն»ը Մասնագէտներու խումբ մը պիտի ստեղծէ, որ հիմնուած պիտի ըլլայ Պերլինի համագումարի եւ Փարիզի Կլոր սեղանի ընթացքին մշակուած սկզբունքներուն վրայ (տե՛ս ստորեւ): Մասնագէտներու խումբը միասնական զեկուցագիր մը պիտի պատրաստէ: Պերլինի եւ Փարիզի հանդիպումներու ընթացքին քննարկուած հարցերու հիման վրայ, նշուած զեկուցագիրը համապարփակ վաւերագրական ամփոփագիր պիտի ըլլայ Փոքր Ասիոյ ժողովուրդներու պատմական եւ ներկայ իրավիճակին ու խնդիրներուն մասին: Նշուած փաստաթուղթի եզրակացութեան մէջ պիտի յստակեցուին խնդիրներու ընդհանրութիւններն ու ընդգրկուած խումբերու առանձին յատկանիշները, նաեւ պիտի կազմուի նախաձեռնութեան եւ «Փոքր Ասիոյ ժողովուրդներու Լիկա»-ի ճանապարհային քարտէզն ու վճռորոշ ուղենիշը:
 - ա. Առանցքային հարցերը, որոնց պատասխանները պէտք է տրուին զեկուցագրին միջոցով հետեւեալներն են.-
 1. Ո՞վ ենք մենք եւ որուն կը ներկայացնենք:
 2. Ի՞նչ նպատակով համախմբուած ենք:
 3. Ինչի՞ պիտի ձգտի այս լիկան:
 4. Ի՞նչ բարոյական չափանիշներով կ'ուղղորդուինք մենք:
 - բ. Մասնագէտներու խումբի աշխատանքը պիտի վերանայուի «Պատմութիւն» եւ «Իրաւունք» յանձնախումբերու կողմէ:
 - գ. Մասնագէտներու խումբի անդամները նախաձեռնութեան այն անդամներն են, որոնք ունակ են մասնակցելու զեկուցագրի պատրաստման գործին՝ Արեւմտահայոց Ազգային Համագումար ՀԿ-ի մշտական Մասնագէտներուն հետ համագործակցաբար:
 - դ. Ժամանակի ընթացքին, միասնական զեկուցագիրը կրնայ հիմք ըլլալ Փոքր Ասիոյ բոլոր ժողովուրդներուն համար պատմութեան այլընտրանքային դասագիրքի պատրաստման գործընթացին համար:

10. Փոքր Ասիոյ ժողովուրդներու շարժումը պէտք է գործէ կարճատեւ, միջին եւ երկարաժամկետ աշխատանքային նախագիծերով.
- ա. Կարճաժամկետ աշխատանքները կ'ընդգրկեն յառաջիկայ չորսամսեայ ժամանակահատուածը, որուն ընթացքին պէտք է.
1. Պատրաստել եւ հաստատման ներկայացնել Փոքր Ասիոյ ժողովուրդներու լիկայի նախագիծը:
 2. Առերես հանդիպումներ ունենալ կազմակերպութիւններու եւ նախաձեռնութիւններու հետ՝ պատրաստելու եւ հրաւիրելու համար զանոնք՝ շարժման միանալու: Անհրաժեշտութեան պարագային, Համակարգող յանձնախումբը սոյն նպատակին համար տարածաշրջանային ենթայանձնախումբեր պիտի ստեղծէ:
 3. Թրքերէն եւ անգլերէն լեզուներով հրապարակել Պերլինի համագումարի նիւթերն ու Փարիզի Կլոր սեղանին նախատեսուած Փոքր Ասիոյ ժողովուրդներու լիկայի հեռանկարներուն առնչուող քննարկումները:
 4. Հայաստանի մէջ 2017 թուականի աշնան կազմակերպել Մասնագէտներու խումբի առաջին հանդիպումը:
 5. Տարածքային համագործակցութեան խումբեր կազմել այն շրջաններուն մէջ, ուր Փոքր Ասիոյ ժողովուրդներ կը բնակակցին:
 6. Մեկնարկել հինգ յանձնախումբերու գործունէութիւնը:
 7. Դրամազուխ ստեղծելու նպատակով ստեղծել հիմնադրամ մը:
- բ. Միջին ժամկետի աշխատանքները կ'ընդգրկեն յառաջիկայ մէկամսեայ ժամանակահատուածը, որուն ընթացքին պէտք է.
1. Հրապարակել Մասնագէտներու խումբի զեկուցագիրը:
 2. Ստեղծել եւ գործի լծել Փոքր Ասիոյ ժողովուրդներու լիկան:
 3. Ստեղծել տեղեկատուութեան եւ հեռարձակման միաւոր:
- գ. Երկարաժամկետ աշխատանքները կախեալ են Մասնագէտներու խումբի զեկուցագրէն եւ յանձնախումբերու կայացուցած որոշումներէն:

Փոքր Ասիոյ ժողովուրդներու Լիկան

- «Փոքր Ասիոյ ժողովուրդներու լիկա»ն պիտի գրանցուի որպէս ոչ-եկամտային եւ ոչ-կառավարական կազմակերպութիւն, որ պաշտպան պիտի հանդիսանայ Փոքր Ասիոյ ժողովուրդներու իրաւունքներուն:
- Թէ՛ անհատներ եւ թէ՛ կազմակերպութիւններ կրնան անդամակցիլ լիկային:
- Ոչ միայն փոքրասիական ծագում ունեցող անդամները, այլեւ այլ ծագում ունեցող անհատներ եւ մարդու իրաւունքներու բնագաւառին մէջ գործունէութիւն ծաւալող ոչ-կառավարական կազմակերպութիւններ կրնան միանալ լիկային: Շարժման միանալու հրաւեր պէտք է ստանան.
 - Փոքրասիական ծագումով անհատներ եւ ընկերակցական կառոյցներ:
 - Քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ, անհատներ եւ ընկերակցական կառոյցներ, ինչպիսիք են հիմնադրամները, վերլուծական կառոյցները, մարդու իրաւունքներու պաշտպան հասարակական կազմակերպութիւնները, եւ այլն, որոնք ցանկութիւն ունին միանալու մեր շարժման:
- Փոքր Ասիոյ ժողովուրդներու լիկան երկու մարմիններէ բաղկացած պիտի ըլլայ.- Ընդհանուր ժողովը եւ Գործադիր Մարմինը: Գործադիր Մարմինը պիտի կազմուի Գործադիր խորհուրդէն եւ յանձնախումբերէն:

Երկխոսության Գլխավոր Սկզբունքները

1. Մեր կիսած առաջին ընդհանուր արժեքը արդարության, ժողովրդավարության, երկխոսության եւ խաղաղ բնակակցության նկատմամբ մեր տրամադրուածութիւնն է:
2. Մեր շարժումը պէտք է քաջալերէ երկխոսութիւնը թէ՛ համայնքներուն մէջ, թէ՛ անոնց միջեւ: Այս առումով մենք ունինք երկխոսության երեք ուղղութիւններ.-
 - ա. Իրաքանչիւր համայնքի մէջ:
 - բ. Տարբեր համայնքներու միջեւ:
 - գ. Բոլոր համայնքներուն միջեւ:
3. Համընդհանուր ինքնութիւնը երկու գլխավոր առանցքներ ունի.-
 - ա. Փոքր Ասիոյ հալածուած եւ խտրականութեան գոհ դարձած բնիկ ժողովուրդները:
 - բ. Երբեմնի Օսմանեան Կայսրութեան քաղաքացիները եւ համայնքները:
4. Մեր շարժումը պէտք է բարենպաստ պայմաններ ստեղծէ՝ բոլոր խումբերու համար, անկախ անոնց քանակէն: Մանաւանդ, զգուշ վարուիք բառերու օգտագործումէն: Բոլոր պարագաներուն պէտք է բազմակարծիք եւ հանդուրժողական հարթակ հանդիսանանք բոլոր համապատասխան երաշխիքներով, որոնք մէկուսացումէ զերծ կը պահեն մեծ եւ փոքր բոլոր խումբերը:
5. Մեր գործունէութիւնը կ'ընդգրկէ բոլոր ցեղային, ցեղա-կրօնական, կրօնական եւ լեզուական խումբերը ընդհանուր հայրենիքին եւ ծագման երկրին մէջ, ինչպէս նաեւ Փոքր Ասիայէն տեղահանուած սփիւռք(ներ)ը: Երեք գլխավոր խումբեր են լեզուական, կրօնական եւ ցեղային խումբերը (հայեր, յոյներ եւ արամերէն խօսող քրիստոնէաներ, եւ այլն): Բացի անկէ, մեր շարժումը կ'ընդգրկէ ոչ-խալամական, ոչ-թուրք բնակչութիւնը (համշէններ, տերսիմցիներ (զազա, քրզըլպաշ, քուրմանճ, քրմանճ), ալեիներ, եգիտիներ, նուսայրիներ, եւ այլն) եւ ոչ-թուրք, ոչ-քիւրտ սիւննի բնակչութիւնը (չերքէզներ, լազեր, եւ այլն):
6. Խառնածին անհատները երկխոսութեան կամուրջ են: Անոնք կրնան արագացնել երկխոսութեան գործընթացը համայնքներու միջեւ:
7. Արամեական ծագում ունեցող ժողովուրդները պէտք է ներկայացուին ըստ իրենց նախընտրած ինքնութեան, օրինակ՝ որպէս սուրիանիներ, (սուրիանի-) արամեացիներ, ասորիներ կամ քաղղեացիներ: Այսօր, այս համայնքները, ընդհանուր ազգային ինքնութեան բացակայութեան եւ ազգաշինութեան գործընթացի մէջ են: Անոնք ունին լեզուական ընդհանրութիւններ, սակայն դաւանաբանական տարբերութիւններ.-
 - ա. Սուրիանի-արամերէն խօսող ժողովուրդներ:
 - 1) Արեւելեան Առաքելական եկեղեցի (նաեւ ծանօթ է Նեստորական եկեղեցի անունով)
 - 2) Ասորի Ուղղափառ եկեղեցի
 - 3) Ասորի Կաթողիկէ եկեղեցի
 - 4) Քաղղեական եկեղեցի
 - 5) Բողոքականներ
8. Տարածքային սահմանումներուն վերաբերող սկզբունքներ.-
 - ա. Փոքր Ասիոյ աշխարհագրական սահմանները միջազգայնօրէն չեն ճանչցուած: Փոքր Ասիա ըսելով մենք կը հասկնանք Հարաւ-Արեւելեան Ասիոյ Օսմանական բաժինը:
 - բ. Փոքր Ասիան մեզի համար թէ՛ հայրենիք է, թէ՛ ծագման երկիր: Թրքական Ազգայնական/Ազգայնամոլական շարժումները ոչնչացուցին ոչ միայն Փոքր Ասիոյ տեղաբնիկ բնակչութիւնը, այլ նաեւ այն հայրենիքը, ուր հազարամեակներէ ի վեր կ'ապրէին այս ժողովուրդները, ինչպէս նաեւ անոնց ընդհանուր քաղաքակրթութիւնը, զոր ստեղծած էին ընդհանուր արժեքներու համակեցութեան միջոցով:
 - գ. Մենք պէտք է շատ զգուշ ըլլանք «տարածք» եզրը օգտագործած ժամանակ: Այս շարժման համար տարածք եզրը ընդհանուր հայրենիք կը նշանակէ, այսինքն՝ Փոքր Ասիա:
 - դ. Փոքր Ասիա հայրենիքը բաժնուած է աշխարհագրական եւ պատմական տարածաշրջաններու: Մենք պէտք է անոնցմէ իւրաքանչիւրին ճշգրիտ սահմանումներն ունենանք, մասնաւորաբար՝ «Պոնտոս», «Քիւրտիստան», «Արեւմտեան Հայաստան», «Հայկական Բարձրաւանդակ», եւ այլն:
9. Կան պատմական չորս ժամանակահատուածներ, զորս անցած ենք: Մենք տառապած ենք մեր ընդհանուր անցեալէն: Հետեւաբար մենք պէտք է ճիշտ սահմանում տանք մեր

տառապանքներուն եւ կորուստներուն չորս ժամանակահատուածներուն.

- ա. Օսմանեան անցեալ
- բ. Երիտթուրքական անցեալ
- գ. Քեմալական անցեալ
- դ. Ժամանակակից Թուրքիա

10. Յեղասպանութեան շուրջ մեր ընդհանուր իրազեկուածութիւնն ու խիղճը գլխաւոր սկզբունք կը հանդիսանայ:
11. Մենք դէմ ենք «Տոկլորացման» եւ «ապաքաղաքականացման» ռազմավարութիւններուն, որոնք կը կիրառուին տեղահանուած համայնքներուն եւ փախստականներուն վրայ ետ պահելով զանոնք իրենց իրաւունքները պահանջելու տեսլականէն:
12. Մեր մշակութային եւ բնական ժառանգութեան յետագայ կործանման եւ միտուեցաւոր լքուածութեան կանխարգելումը գլխաւոր նպատակ է:
13. Մենք պէտք է փորձենք միջազգային իրազեկում ապահովել այն փաստին շուրջ, որ Փոքր Ասիոյ շատ լեզուներ կորստեան վտանգին առջեւ կանգնած են, կամ նոյնիսկ կորսուած են, ըստ ԵՈՒՆԷՍԲՕ-ի տուեալներուն:
14. Թրքական պաշտօնական պատմութեան աղաւաղումները մեր համընդհանուր կորուստն են: Պատմական ճշմարտութեան շարունակական ժխտումը, մասնաւորապէս Փոքր Ասիոյ մէջ կրկնուող ցեղասպանութեան փաստը համընդհանուր տառապանք կը պատճառէ:
15. Մեր հիմնական նպատակը պէտք է ըլլայ արդարութեան հաստատումն ու բարեփոխումներու նախաձեռնումը մեր ընդհանուր հայրենիքին մէջ, մեր ընդհանուր իրաւունքներուն համար: Եւ այս նպատակին միասնաբար հասնելու համար մենք պէտք է համախմբենք մեր ջանքերը՝ իրաւական եւ խաղաղ բոլոր միջոցներով:
16. Մենք պէտք է վստահ ըլլանք, որ մարդու իրաւունքներու միջազգային համաձայնագիրները, պայմանագիրներն ու արձանագրութիւնները յարգուած են:
17. Ընդհանուր տառապանքը մեր միջեւ կարեկցանք առաջացուցած է: Քրտական հարցը կը հաստատէ այս շատ կարեւոր երեւոյթը:
18. Ինչ կը վերաբերի քրտական պատմական պատասխանատուութեան կարեւոր խնդրին, մեր դիրքորոշումը հետեւեալն է.-
 - ա. Որոշ քրտական ցեղեր եւ անհատներ մասնակից դարձան ցեղասպանութիւններու որոշումներու կայացման եւ իրագործման, մինչդէռ գլխաւոր պատասխանատուութիւնը Երիտ Թուրքերու կառավարութեան եւ պաշտօնական Անգարայի վրայ է:
 - բ. Քիւրտ ժողովուրդը նիւթապէս օգտուեցաւ Փոքր Ասիոյ ոչ-իսլամ ժողովուրդներու բնաջնջումէն:
 - գ. Պատմական ճշմարտութիւններու պարզապէս ճանաչումը բաւարար չէ: Հետեւաբար մենք կոչ կ'ուղղենք թէ՛ Թուրքիոյ մէջ, թէ՛ դուրսը գտնուող քրտական քաղաքական կառոյցներուն եւ վերնախաւին՝ միանալու մեզի մեր այս շարժման մէջ՝ վերակազմաւորելու համար Փոքր Ասիոյ բոլոր շահագրգիռ ժողովուրդները:
19. Իրավիճակը Թուրքիոյ մէջ՝ լայնածաւալ պատերազմ քրտական քաղաքացիական բնակչութեան դէմ, բռնապետական ժողովրդական ռեժիմ եւ արմատական իսլամի տարածման գործընթաց, ինչպէս նաեւ ամբողջ Միջին Արեւելքի մէջ, մեր հիմնական խնդիրն է: Քիւրտերն ու այնտեղ մնացած ոչ-թուրք եւ ոչ-իսլամ բնակչութիւնները, ըստ էութեան, կը տառապին շարունակական խտրականութենէ եւ հետապնդումներէ, որոնք կը ստիպեն արտագաղթելու:
20. Հաւասար իրաւունքներու, ինչպէս նաեւ ժողովրդավար, բազմացեղ եւ աշխարհիկ Թուրքիա ստեղծելու տեսլութիւնը մեր յաջողութեան նախապայմանն է: Հետեւաբար, ժողովրդավար աշխարհիկ թուրքերը (թէ՛ սիւննի եւ թէ՛ ալեւի աշխարհիկ ժողովրդավարներ) ամենաիրատեսական այլընտրանքն են, եւ մենք անոնց հետ համագործակցելու կը միտինք:
21. Թուրքիոյ դրացի երկիրներու քաղաքացիական հասարակութիւնները մեր շարժման հաւանական գործընկերներն են, եւ հրաւիրուած են միանալու անոր:
22. Ընդհանուր ապագան կառուցուած է համակեցութեան սկզբունքին վրայ՝ մեր ընդհանուր հայրենիքին մէջ: